



## Բովանդակություն

Ներածություն .....	3
<i>I. ԳՊՀ-ում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման համառոտ նկարագրություն .....</i>	<i>4</i>
1) Կրեդիտային համակարգի հիմնական դրույթները .....	4
2) Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները .....	6
3) Կրեդիտային համակարգի հիմնական նորմերը .....	7
4) Կրեդիտային համակարգի տարրերը և ընթացակարգերը .....	10
5) Կրեդիտային համակարգի ինստիտուտները .....	16
6) Բուհի տարեկան ուսումնական բեռնվածքի հաշվարկը .....	18
7) Ուսանողների ուսումնառության արդյունքների գնահատումը կրեդիտային համակարգում .....	19
8) Գնահատման համակարգը .....	23
9) Միավորների բաշխումն ըստ գործոնների .....	24
10) Ուսանողների գիտելիքների որակի ստուգման ձևերը .....	25
11) Ուսանողների գիտելիքների միջանկյալ ստուգում .....	27
12) Ուսանողների ինքնուրույն աշխատանքի ստուգում .....	27
13) Ուսանողների գիտելիքների հանրագումարային ստուգում .....	28

## Ներածություն

Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգում տեղի են ունենում բովանդակային, գործառութային և կառուցվածքային լուրջ փոփոխություններ:

Փաստ է, որ խորհրդային կրթական համակարգն այլևս չի բավարարում կրթության կազմակերպման և զարգացման՝ աշխարհում ընդունված չափանիշներին:

Ներկայումս Հայաստանի բուհերի առջև ծառայել է կարևորագույն խնդիր՝ կրթական գործընթացը համապատասխանեցնել մի կողմից աշխատաշուկայի կարիքներին, մյուս կողմից՝ եվրոպական բարձրագույն կրթական տարածքի պահանջներին:

Գիտակցելով դասախոսակենտրոն ուսուցման պակաս արդյունավետությունը՝ անցում է կատարվել նոր որակի կրթական համակարգի, որի դեպքում ուսանողը և կրթության նկատմամբ նրա վերաբերմունքը դառնում են վճռորոշ, կարևորվում է ուսանողակենտրոն ուսուցման համակարգը:

Կրթության կազմակերպման նոր համակարգը (կրեդիտների կուտակման և փոխանցման/ECTS/ եվրոպական համակարգը) ավելի քան 30 տարի հաջողությամբ կիրառվում է Եվրոպական երկրներում:

Գավառի պետական համալսարանի զարգացման հնգամյա ռազմավարությունը միտված է կրթության նորովի կազմակերպմանը, ուսման որակի բարձրացմանը, մրցունակ կադրերի պատրաստմանը:

Վերջին տարիների ընթացքում համալսարանում զգալի աշխատանք է կատարվել կրեդիտային համակարգի ներդրման ուղղությամբ:

Սույն ուղեցույցը նախատեսված է ԳՊՀ դասախոսների համար: Այստեղ ներկայացված են կրեդիտային համակարգի հիմնական դրույթները, կրթության կազմակերպման առանձանահատկությունները, ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման ձևերն ու մեթոդները:

# I. ԳՊՀ- ում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման համառոտ նկարագրությունը

## 1. Կրեդիտային համակարգի հիմնական դրույթները

Հետևյալ դրույթներն ընդունված են Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգում, համահունչ են համաեվրոպական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգին/ECTS/ և նպատակ ունեն ուսանողների մոտ ձևավորել անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ (իրագրելություններ և կոմպետենցիաներ):

- 1) Իրագրելություններ (կոմպետենցիաները) գիտելիքների, կարողությունների և հմտությունների դիմամիկ համակցություն է, որի ձևավորումը մասնագիտական կրթական ծրագրի հիմնական նպատակն է: Այն կարող է լինել մասնագիտական (առանձնահատուկ ուսման տվյալ բնագավառի համար) և ընդհանուր (միանման ուսման ցանկացած բնագավառի համար):
- 2) Կրթական արդյունքն այն է, ինչ պետք է գիտենա, հասկանա և (կամ) կարողանա անել ուսանողը ուսումնառության ավարտին: Կրթական արդյունքը զուգակցվում է համապատասխան գնահատման չափանիշով, որը թույլ է տալիս դատել դասընթացով սահմանված կրթական արդյունքի ձեռքբերման մակարդակի մասին: Կրթական արդյունքը գնահատման չափանիշի հետ միասին սահմանում են կրեդիտի շնորհման պահանջները:
- 3) Կրթական մոդուլը ուսումնական ծրագրի ամենափոքր, համեմատաբար ինքնուրույն մասն է, որի համար կարող է կրեդիտ տրվել: Կրթական մոդուլի ուսուցման տևողությունը 1 կիսամյակ է՝ դրանով սահմանված արդյունքների պարտադիր գնահատմամբ:
- 4) Կրթական մոդուլին ամրագրված կրեդիտները շնորհվում են ամբողջությամբ և ոչ թե մաս-մաս:
- 5) Կրեդիտը ուսանողի ստացած կրթական արդյունքների չափման միջոց է, որը տրվում է ուսանողին տվյալ կրթական մոդուլով նախանշված լրիվ ուսումնական բեռնվածության կատարումից և կրթական արդյունքների առնվազն “բավարար” գնահատումից հետո:  
Կրեդիտը սովորողի ուսումնական բեռնվածությունը չափող պայմանական միավոր է:
- 6) ECTS կրեդիտը առանձին դասընթացով, կրթական որևէ մոդուլով կամ ուսումնական ծրագրով նախանշված կրթական արդյունքների հասնելու համար ուսանողից

պահանջվող ուսումնական բեռնվածության չափման ժամաքանակով արտահայտված պայմանական միավոր է:

- 7) ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածությունը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական գործողությունները, այդ թվում մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկաներին, ինչպես նաև կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և հանձնելը, անհատական հետազոտությունը և այլն:
- 8) Կրեդիտը տրվում է ուսանողին միայն կրթական մոդուլով նախանշված կրթական արդյունքների գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների լրիվ քանակը քննական արդյունքների (գնահատականների կամ թվանշանների) հետ միասին:
- 9) ECTS կրեդիտը չի չափում դասախոսի ուսումնական գործունեության (դասավանդման) աշխատածավալը: Այն չափում է ուսանողի ուսումնական գործունեության (ուսումնառության) ծավալը:
- 10) Կրեդիտը չի փոխարինում գնահատականների օգնությամբ ուսանողի գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած գնահատականներով:
- 11) Կրեդիտների փոխանցման և կուտակման ECTS միասնական համաեվրոպական համակարգի համաձայն մեկ ուսումնական տարում ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունը չափվում է 60 ակադեմիական կրեդիտով: Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում (ԵԲԿՏ) ուսանողների ձեռքբերած կրթական արդյունքների արժևորման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ դրանց տեղափոխումը դյուրացնելու համար:
- 12) Կրեդիտների կուտակման համակարգում կիսամյակը, ուսումնական տարին, կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար պետք է ստանալ կրեդիտների սահմանված քանակը՝ համաձայն ուսումնական ծրագրի պահանջների: Կրեդիտները շնորհվում և կուտակվում են միայն այն դեպքում, երբ պահանջվող կրթական արդյունքների հաջող ձեռքբերումը հաստատված է գնահատմամբ:
- 13) Ուսուցման գործընթացը կրեդիտային համակարգով կազմակերպելիս՝ սահմանվում են տվյալ մասնագիտական կրթական ծրագրով նախատեսված որակավորման շնորհման համար անհրաժեշտ կրեդիտների քանակը, այդ կրեդիտները ձևավորող դասընթացների և կրթական մոդուլների բովանդակային կազմը՝ ծրագրի պարտադիր և ընտրովի առարկայացանկի տեսքով, դասընթացներին հատկացված կրեդիտները և ուսուցման ցիկլի նվազագույն տևողությունը: Համաձայն բուհի կողմից սահմանված

կարգի և կրթական ծրագրի պահանջների՝ ուսանողներն իրենք են որոշում երբ, ինչ ժամկետներում և ինչ բովանդակությամբ կուտակել որակավորման համար անհրաժեշտ կրեդիտների նվազագույն քանակը, որից հետո կարող են հայցել համապատասխան որակավորում:

- 14) Կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի բոլոր կառուցամասերին և դրանց բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին և ուսումնական այլ գործողություններին, որոնք ենթակա են առանձին գնահատման:
- 15) Ուսումնական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների խնդիրները, նախապայմանները և համառոտագրերը, հատկացված կրեդիտները, դասավանդման և գնահատման եղանակները պետք է նախապես հրապարակված լինեն (տպագրված կամ տեղադրված բուհի կայքում):
- 16) Այլ հավատարմագրված բուհերում և կրթական ծրագրերում ստացված կրեդիտները ԳՊՀ-ում սկզբունքորեն ճանաչելի և փոխանցելի են, եթե դրանց բովանդակությունը նախանշված և փաստացի կրթական արդյունքները համապատասխանում են ԳՊՀ-ում իրականացվող ուսումնական ծրագրի պահանջներին:

## **2. Կրեդիտային համակարգի հիմնական գործառնությունները**

1) Այդ գործառնությունները երկուսն են՝

ա) կրեդիտների փոխանցում (կրթական արդյունքի չափում/արժևորում և փոխանցում),

բ) կրեդիտների կուտակում (դասախոսի, կրթական մոդուլների և դրանց յուրացման ժամկետների ընտրություն, կրթական արդյունքի կուտակում):

Նշված գործառնությունները բնութագրվում են մի շարք հատկանիշներով և ուղեկցվում համապատասխան ընթացակարգերով՝

2) Կրեդիտների փոխանցման գործառնության (Ա) հիմնական տարրերն են՝

ա) մոդուլացված ուսումնական ծրագրերը, որոնց բոլոր բաղադրամասերի կրթական մոդուլների (դասընթացներ, կուրսային և ավարտական աշխատանքներ, պրակտիկաներ և այլն) աշխատածավալներն արտահայտված են ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունն (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանք) արտահայտող ECTS համատեղելի կրեդիտային արժեքներով,

բ) կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքների փոխադարձ ճանաչման և որոշակի թվով կրեդիտների ծրագրից ծրագիր փոխանցման (տեղափոխման) հնարավորություն ԳՊՀ-ի ներսում կամ բուհերի միջև՝ ընդունող ծրագրի կամ բուհի պահանջներին համապատասխան:

3) Կրեդիտների կուտակման գործառնության (Բ) հիմնական պայմաններն են՝

- ա) Ուսումնական ծրագրի կրթական մոդուլների ցանկը բաղկացած է ինչպես պարտադիր, այնպես էլ ընտրովի մասերից: Կրթական մոդուլների յուրացման հաջորդականությունը սահմանափակվում է միայն դրանց անհրաժեշտ նախապայմանների առկայությամբ:
- բ) Ենթադրվում (նախատեսում) է ուսանողների կողմից կրթական մոդուլների ընտրության և դրանցում ընդգրկվելու համար գրանցման համապատասխան ընթացակարգերի, ինչպես նաև ուսանողների անհատական ուսումնական ծրագրերի կիրարկում:
- գ) Միևնույն դասընթացի համար մեկից ավելի ուսումնական հոսքերի կազմակերպման դեպքում դրանցում ընդգրկվելու ուսանողի ընտրության հնարավորություն՝ ելնելով դասախոսի և (կամ) դասընթացի կայացման ժամանակացույցի նախապատվությունից:
- դ) Համապատասխան օրենսդրական դաշտի առկայության դեպքում միևնույն կրթական ծրագրում ընդգրկված ուսանողների տարբերակված ուսումնական բեռնվածությունների և ուսումնառության ժամկետների հնարավորություն:

### **3. Կրեդիտային համակարգի հիմնական նորմերը**

#### **3.1. Տարեկան աշխատաժամվալը և ուսումնական բեռնվածությունը**

- 1) ԳՊՀ բոլոր մակարդակի կրթական ծրագրերում առկա ուսուցմամբ ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանվում է 1800 ժամ, որը համարժեք է 60 ECTS կրեդիտի:
- 2) 1 ECTS կրեդիտը սահմանվում է որպես ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) բեռնվածությամբ ուսումնական աշխատանք՝ ուսումնական ծրագրի դասընթացով կամ մոդուլով նախանշված կրթական արդյունքներին հասնելու համար: 1 կրթական կրեդիտին համապատասխանում է 30 ակադեմիական ժամ:
- 3) Ուսումնական տարվա տևողությունը սահմանվում է 40 շաբաթ, որից առնվազն 32-ը տրամադրվում է ուսումնական պարապմունքներին և պրակտիկային: Ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակներով՝ աշնանային և գարնանային:
- 4) Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1,5 ակադեմիական կրեդիտի/45:30=1.5կրեդիտ/:
- 5) Բակալավրի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական լսարանային բեռնվածությունը կազմում է 23-30 ժամ<sup>1</sup>, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում՝ 15-22 ժամ:

<sup>1</sup> Առանց ֆիզկուլտուրայի պարապմունքների

- 6) Առկա ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողը կհասանելի կազմում պետք է ունենա միջինը 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով): Ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը կազմում է 60 կրեդիտ:
- 7) Բացառիկ դեպքերում, ուսման բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողները ԳՊՀ ռեկտորի համաձայնությամբ կարող են վերցնել լրացուցիչ ուսումնական բեռնվածություն:

### **3.2. Կրեդիտների հատկացումը**

- 1) Կրեդիտներ հատկացվում են ուսումնական ծրագրի ինքնուրույն գնահատվող բոլոր կրթական բաղկացուցիչներին (դասընթացներ, կրթական մոդուլներ, պրակտիկաներ, կուրսային և ավարտական աշխատանքներ և այլն):
- 2) Կրեդիտների հատկացման հաշվարկի հիմքում դրվում է լսարանային (կոնտակտային) ժամերի քանակը՝ տարբերակված ըստ պարապմունքի ձևերի (դասախոսություն, սեմինար, գործնական կամ լաբորատոր պարապմունքներ և այլն), դասավանդման մեթոդների և քննության կազմակերպման ձևերի:
- 3) Դասընթացի մշակման և իրականացման համար պատասխանատու դասախոսը պարտավոր է պլանավորել ուսանողի ուսումնական գործողություններն այնպես, որ դրանց իրականացման համար պահանջվող ժամաքանակը համապատասխանի դասընթացին հատկացված կրեդիտների ժամային համարժեքներին՝ դասավանդման պատշաճ որակի ապահովումով:
- 4) Կրթական մոդուլին հատկացվող կրեդիտները պետք է ունենան ամբողջական արժեքներ՝ ուսումնական ծրագրի մանրատվածության վտանգից խուսափելու և կրեդիտների կուտակման ու տեղափոխման գործառույթները դյուրացնելու նպատակով:
- 5) Կրեդիտային համակարգի կիրարկման դեպքում կհասանելի ընթացքում ուսանողի ստացած կրթական արդյունքները կրկին չեն գնահատվում ուսումնական ծրագրի ավարտից հետո կազմակերպվող ավարտական (պետական) քննությամբ (կամ այդ քննության անցկացման դեպքում ուսանողին լրացուցչ կրեդիտներ չեն տրվում):
- 6) Ուսանողի կողմից ծրագրի ընդհանուր կրթական արդյունքներին համապատասխան կարողությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի (նախագիծ, ատենախոսություն և այլն) կատարումով:

### **3.3. Կհասանելի կազմում համակարգը**

- 1) Յուրաքանչյուր դասընթացի կամ կրթական մոդուլի ուսուցման ստանդարտ տևողությունը 1 կհասանելի է: Մեծածավալ դասընթացները բաժանվում են առանձին մոդուլների:



2) Եթե ուսումնական գործընթացով նախատեսված է դասընթացների ուսանողների գրանցման գործառույթ, ապա ԳՊՀ ակադեմիական քաղաքականության վարչությունը կիսամյակի սկզբից առնվազն 1 շաբաթ առաջ հրապարակում է դասընթացների և քննությունների կայացման համատեղված ժամանակացույցը:

3) Անկախ դասընթացով կամ մոդուլով նախանշված կրթական արդյունքների գնահատման եղանակից և գնահատականների նշագրման ձևից (ստուգաբք կամ տարբերակված գնահատում), բոլոր տեսակի քննություններն իրականացվում են ուսումնական պարապմունքների ավարտից հետո կիսամյակի վերջում կազմակերպվող առանձին քննաշրջաններում:

### **3.4. Կրթական ծրագրերը**

1) Բակալավրի աստիճան շնորհող կրթական ծրագրերի ուսումնական լրիվ աշխատածավալը սահմանվում է 240 կրեդիտ:

2) Մագիստրոսի աստիճան շնորհող կրթական ծրագրերի ուսումնական լրիվ աշխատածավալը սահմանվում է 120 կրեդիտ:

3) Կրթական ծրագրում ընդգրկված ցանկացած դասընթաց կամ կրթական մոդուլ ծրագրում ներկայացվում է հատկացված կրեդիտների հետ միասին:

### **3.5. Ակադեմիական տեղեկագիրը**

1) Ակադեմիական տեղեկագիրն օգտագործվում է ուսանողի ուսումնական գործունեությունը և առաջադիմությունը ուսման որոշակի կամ լրիվ ժամանակահատվածի ընթացքում վավերագրելու համար՝ ուսումնասիրած դասընթացների և կրթական մոդուլների, շնորհված կրեդիտների և ստացած գնահատականների գրանցման միջոցով: Այն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

2) ԳՊՀ ակադեմիական քաղաքականության վարչությունը յուրաքանչյուր ուսանողի համար նրա ընդունման պահից վարում է ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի վաստակած կրեդիտները և գնահատականներն՝ ըստ կրթական մոդուլների և կիսամյակների:

3) Ուսանողի ստացած կրեդիտը վավերագրվում է նրա ակադեմիական տեղեկագրում և ուժի մեջ է մնում նրա ուսումնառության ողջ ժամանակաշրջանի համար՝ անկախ ուսումնական ծրագրի հնարավոր հետագա փոփոխություններից:

4) Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում յուրաքանչյուր կիսամյակի արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ

ժամանակահատվածը ուսանողի առաջադիմությունը ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք պետք է ներառեն հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝

- ա) ուսանողի վաստակած գումարային կրեդիտների քանակը,
- բ) տարբերակված գնահատումով կրեդիտների գումարային քանակը,
- գ) վարկանիշային միավորները,
- դ) միջին որակական գնահատականը/ՄՈԳ/:

5) Գումարային կրեդիտների քանակը բոլոր այն դասընթացների և մոդուլների կրեդիտների գումարն է, որոնք կիրառելի են տվյալ ուսումնական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու համար և որոնցից ուսանողը ստացել է առնվազն բավարար գնահատական կամ ստուգարք:

6) Թվանշանով գնահատված կրեդիտների գումարային քանակը ներառում է գումարային կրեդիտների այն մասը, որոնց համապատասխանող դասընթացները կամ ուսումնական մոդուլները գնահատվել են թվային համարժեք ունեցող առնվազն բավարար գնահատականներով:

7) Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) ուսանողի գնահատականների կրեդիտներով հաշվարկված միջին արժեքն է, որը որոշվում է արդյունաբար վարկանիշային միավորը տարբերակված գնահատումով կրեդիտների գումարի վրա բաժանելով: Հաշվարկի արդյունքը ներկայացվում է 1/100-ի ճշտությամբ:

8) Տարբերակվում են կիսամյակային (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և ամփոփիչ (հաշվարկված ուսման տվյալ ժամանակահատվածի համար) վարկանիշային միավորներ և ՄՈԳ-եր:

9) ԳՊՀ ակադեմիական քաղաքականության վարչությունը պարտավոր է ուսանողի հիմնավորված պահանջի դեպքում նրան տրամադրել ակադեմիական տեղեկագիր ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար:

#### **4. Կրեդիտային համակարգի տարրերը և ընթացակարգերը**

##### **4.1. Ուսումնական ծրագիրը և ավարտական պահանջները**

1) Մասնագիտության ուսումնական ծրագիրը (պլանը) ներկայացվում է համապատասխան կրթամասերում խմբավորված պարտադիր և ընտրովի (եթե այդպիսիք նախատեսված են) դասընթացների ցանկով:

2) Յուրաքանչյուր դասընթացի համար նշվում է նրա եզակի նույնացման թվանիշը (դասիչը), դասընթացի լրիվ անվանումը, նրան ամրագրված կրեդիտների քանակը, պարապմունքների իրականացման ձևը, կայացման կիսամյակի համարը (ամրագրված ուսումնական ծրագրերում) կամ կիսամյակը (աշնանային կամ գարնանային՝ ճկուն ուսումնական ծրագրի դեպքում), դասընթացի կամ կրթական մոդուլի նախապայմանը (եթե այդպիսին կա) և գնահատման ձևը:

3) Կրթական ծրագրի ավարտական պահանջներում նշվում է համապատասխան որակավորում ստանալու համար անհրաժեշտ կրեդիտների քանակը (ըստ կրթամասերի և ընդամենը) և հանրագումարային ամփոփիչ ՄՈԳ-ը (անհրաժեշտության դեպքում կարող է սահմանվել նաև ՄՈԳ-ի նվազագույն շեմ մասնագիտական կրթամասի համար):

#### **4.2. Գասընթացները և կրթական մոդուլները**

1) Մեծածավալ դասընթացները կարող են բաժանվել առանձին մոդուլների: Գասընթացների մոդուլացումը կատարվում է հնարավորինս նվազագույն կիսամյակների ընթացքում դրանք ավարտելու սկզբունքով:

2) Առանձին դասընթացները և մոդուլներն իրենց բնույթով բաժանվում են 3 հիմնական խմբերի՝

ա) պարտադիր ամրագրված դասընթացներ, որոնք յուրացվում են պարտադիր և խիստ որոշակի հերթականությամբ,

բ) պարտադիր չամրագրված դասընթացներ, որոնց յուրացման հերթականությունը ընտրում է ուսանողը՝ պահպանելով դասընթացի նախապայմանները,

գ) ընտրովի դասընթացներ, որոնց առաջարկվող ցանկից ընտրում է ուսանողը, իսկ դրանց յուրացման հաջորդականությունը կարող է լինել ինչպես ամրագրված, այնպես էլ ազատ:

#### **4.3. Գասընթացների տեղեկագիրքը**

1) ԳՊՀ ակադեմիական քաղաքականության վարչությունը հրապարակում է դասընթացների տեղեկագիրք (տպագրված և/կամ բուհի կայքում տեղադրված էլեկտրոնային տարբերակի տեսքով), որը թարմացվում է, առնվազն, յուրաքանչյուր ուստարում:

2) Գասընթացների տեղեկագիրքը պետք է պարունակի.

ա) ընդհանուր տեղեկատվություն բուհի վերաբերյալ՝ տեսակը և կարգավիճակը, ուսումնական ստորաբաժանումները, առաջարկվող կրթական ծրագրերը և ընդունելության պայմանները, ուսումնական գործընթացի ժամանակացույցը, հիմնական ներբուհական կանոնները (հատկապես կրեդիտների փոխանցման և պաշտոնական ճանաչման վերաբերյալ) և այլն:

բ) տեղեկատվություն կրթական ծրագրերի վերաբերյալ.

❖ ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, մուտքի շեմային պահանջները, նպատակները, կրթությունը շարունակելու հնարավորությունները, ծրագրի կառուցվածքը կրեդիտներով, քննական և գնահատման

կանոնները, ավարտական ատեստավորման ձևը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,

- ❖ առանձին դասընթացի նկարագրությունը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը (որը պետք է պարունակի տեղեկատվություն դասընթացի տեսակի և մակարդակի վերաբերյալ), ուսուցման տարին և (կամ) կայացման կիսամյակը, դասընթացին ամրագրված կրեդիտների քանակը (ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի խնդիրներն՝ արտահայտված կրթական արդյունքներով և կարողություններով, անհրաժեշտ նախապայմանները, համառոտագիրը (հակիրճ բովանդակությունը), երաշխավորվող գրականությունը, ուսուցման և գնահատման մեթոդները, դասավանդման լեզուն:

գ) ընդհանուր տեղեկատվություն ուսանողների համար՝

- ❖ անհրաժեշտ տեղեկատվություն օտարերկրյա ուսանողների համար (ուսումնառության և ապրելու պայմանները, միջազգային ծրագրերը, լեզվի դասընթացները և այլն),
- ❖ նյութական օգնության հնարավորությունները, ուսման վարձերի զեղչման և փոխհատուցման պայմաններն ու կանոնները, գործող ուսանողական ծառայությունները, ուսումնական ենթակառուցվածքները և այլն:

#### **4.4. Ուսումնական գործընթացի և դասընթացների ժամանակացույցերը**

1) ԳՊՀ ակադեմիական քաղաքականության վարչությունը յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում հրապարակում է (տպագրված և/կամ բուհի կայքում տեղադրված էլեկտրոնային տարբերակի տեսքով) տվյալ տարվա ուսումնական օրացույցը (ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցը) ըստ կիսամյակների, որտեղ ըստ օրերի նշվում են ուսուցման սկիզբը և ավարտը, դասընթացներին գրանցման (եթե նախատեսվում է) և դրանց փոփոխությունների կատարման ժամկետները, քննաշրջանները և արձակուրդները:

2) ԳՊՀ դեկանատները յուրաքանչյուր կիսամյակի համար վաղօրոք կազմում և հրապարակում են պարապմունքների դասացուցակը, իսկ դասընթացներին գրանցման գործառույթի կիրարկման դեպքում՝ առաջադրվող բոլոր դասընթացների և քննությունների ժամանակացույցերը, որտեղ բերվում է տեղեկատվություն դասընթացների կայացման վայրի, օրվա և ժամի, դասախոսի, ընդգրկված ուսանողների թույլատրելի քանակների, քննությունների օրվա և այլնի վերաբերյալ:

#### **4.5. Ուսումնառության անհատական ծրագիրը և դասընթացներին գրանցման կազմակերպումը**

- 1) Ուսումնառության անհատական ծրագիրը կազմելիս ուսանողի համար որպես հիմնական ելակետային փաստաթուղթ (ուղեցույց) է հանդիսանում դասընթացների տեղեկագիրքը:
- 2) Հիմք ընդունելով դասընթացների տեղեկագրքում կրթական ծրագրի ավարտական պահանջները, առաջարկվող դասընթացների ցանկը և առանձին դասընթացների վերաբերյալ բերված տեղեկատվությունը, ուսումնառության սկզբում ուսանողն իր ուսումնական խորհրդատուի օգնությամբ կազմում է ուսումնառության իր անհատական ծրագիրը, այն հաստատման տալիս համապատասխան ամբիոնին և դեկանատին, ապա օրինակներից մեկը հանձնում ակադեմիական քաղաքականության վարչություն:
- 3) Ուսումնառության անհատական ծրագրի ձևաթերթը մշակում է ԳՊՀ ակադեմիական քաղաքականության վարչությունը: Անհատական ծրագրում բերվում են պարտադիր և ընտրովի դասընթացների ընտրացանկն ըստ ուսման տարիների և կիսամյակների, ինչպես նաև դրանց ամրագրված կրեդիտները:
- 4) Անհատական ծրագրում նշված դասընթացներում ընդգրկվելու համար ուսանողը պարտավոր է սահմանված ժամկետներում գրանցվել:
- 5) Դասընթացներին գրանցման գործընթացը կարող է սկսվել նախորդ կիսամյակում և շարունակվել մինչև տվյալ կիսամյակի պարապմունքների սկիզբը: Բոլոր ուսանողները պետք է գրանցված լինեն մինչև տվյալ կիսամյակի դասերի սկիզբը:
- 6) Ուսանողների ընդգրկումը դասընթացներում իրականացվում է ըստ գրանցման հերթականության, եթե այլ բան նախատեսված չէ դասընթացի նախապայմանում:
- 7) Սահմանված ժամկետից 2 շաբաթ հետո դասընթացներին մասնակցելու բոլոր տեսակի գրանցումները դադարեցվում են:
- 8) Կարող է հանվել ցանկացած դասընթացի առաջադրումը տվյալ կիսամյակում, եթե դրանում ընդգրկված չեն բավարար թվով ուսանողներ (մեկ խմբի ձևավորման համար անհարժեշտ է նվազագույնը յոթ ուսանողի գրանցում): Նման դեպքերում այդ դասընթացին գրանցված ուսանողները սահմանված ժամկետներում կատարում են համապատասխան փոփոխություններ իրենց անհատական ուսումնական ծրագրերում՝ ընտրելով նոր դասընթաց կամ դրա ընտրությունը տեղափոխում հաջորդ տարի:
- 9) Անհրաժեշտության դեպքում, սահմանված ժամկետներում ուսանողը կարող է փոփոխություններ կատարել ուսումնառության իր անհատական ծրագրում՝ նախապես համաձայնեցնելով դրանք իր ուսումնական խորհրդատուի և համապատասխան ստորաբաժանման ղեկավարության հետ (ստորագրված ձևաթերթի տեսքով), այնուհետև գրանցվում նոր դասընթացներին:

10) Ուսումնառության անհատական ծրագրի փոփոխությունների դեպքում (դասընթացների բացթողում և/կամ ավելացում) ուսանողը լրացնում է փոփոխությունների համապատասխան ձևաթերթը:

11) Ուսումնառության անհատական ծրագրի փոփոխությունների ձևաթերթը մշակում է ակադեմիական քաղաքականության վարչությունը: Ձևաթերթում նշվում են բաց թողնված և/կամ ավելացված դասընթացների անվանումները, դրանց համապատասխանող կրեդիտների քանակը, կիսամյակը և ուստարին:

12) Անհատական ծրագրի փոփոխության (դասընթացից ազատումը, դասընթացի բացթողումը կամ դասընթացի ավելացումը ուսանողի ընտրացանկում) ընթացակարգը հետևյալն է՝

12.1. դասընթացից ազատվելը.

ուսանողը կարող է չեղյալ համարել ցանկացած նախորդ գրանցում տվյալ դասընթացին՝ մինչև տվյալ կիսամյակի պարապմունքների սկիզբը,

12.2. դասընթացի բացթողումը.

ա) ուսանողը կարող է բաց թողնել դասընթացը ուսումնական խորհրդատուի և ֆակուլտետի դեկանի համաձայնությամբ՝ մինչև պարապմունքների 2-րդ շաբաթվա վերջը,

12.3. դասընթացի ավելացումը.

ուսանողն իր ընտրացանկում դասընթաց կարող է ավելացնել ուսումնական խորհրդատուի և դասախոսի համաձայնությամբ՝ մինչև պարապմունքների 2-րդ շաբաթվա վերջը:

13) Ուսանողը կազմում է տվյալ կիսամյակի պարապմունքների իր անհատական դասացուցակը՝ ելնելով ուսումնառության իր անհատական ծրագրից և դասընթացների հրապարակված ժամանակացույցից:

14) Սահմանված ժամկետում ուսումնառության անհատական ծրագիր չներկայացնելու դեպքում դեկանատը ուսանողի ուսումնառությունը կազմակերպում է տվյալ մասնագիտության համար կազմված տիպային ուսումնական պլանով:

#### **4.6. Ուսման առաջադիմությունը**

1) Ըստ ուսման առաջադիմության ուսանողները դասակարգվում են առաջադիմող, փորձաշրջանի կարգավիճակում գտնվող և հեռացման ենթակա ուսանողների:

2) Ուսանողը համարվում է առաջադիմող, եթե՝

- ա) կիսամյակում ունի 30 կրեդիտ միջին ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով);
  - բ) հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր պարտադիր դասընթացների կրեդիտները;
- 3) Միևնույն կրթական ծրագրում ընդգրկված ուսանողների ակադեմիական առաջադիմության համեմատման համար օգտագործվում է նրանց վարկանիշային միավորը:

#### **4.7. Գասընթացի վերահանձնումը և կրկնումը**

- 1) Գրական գնահատված դասընթացի վերահանձնում չի թույլատրվում:
- 2) Հաջողությամբ հանձնած դասընթացների կրեդիտները կուտակվում են (գրանցվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում) և մնում ուժի մեջ՝ անկախ կիսամյակում ուսանողի ցուցաբերած առաջադիմությունից կամ ուսման ընդհատման հանգամանքից:
- 3) Ուսումնառության ընթացքում առանձին կրթական մոդուլներից վաստակած կրեդիտների և ստացած գնահատականների ճանաչման և կուտակման արդյունքում վերանում է ուսումնական տարին ամբողջությամբ կրկնելու անհրաժեշտությունը:
- 4) Կրեդիտները փոխանցելի են ԳՊՀ- ից մեկ այլ բուհ առանձին դասընթացների, դասընթացների խմբերի (մոդուլների) կամ ուսումնառության որոշակի ժամանակահատվածների ձևով: Փոխանցումը կարող է կատարվել ուսանողի հայտի հիման վրա՝ շահագրգիռ բուհերի նախնական համաձայնությամբ:
- 5) Որևէ ուսումնական ծրագրից ստացված կրեդիտները կարող են փոխանցվել մեկ այլ ուսումնական ծրագիր՝
  - ա) երբ դրանց բովանդակությունները միանման են,
  - բ) եթե կան բովանդակային տարբերություններ, սակայն աննշան են,
  - գ) երբ առկա են բովանդակային տարբերություններ, սակայն կրթական վերջնական արդյունքը համարժեք է:
- 6) Այլ բուհերում ուսումնառության որոշակի ժամանակաշրջանի անցկացման դեպքում ուսումնառության ծրագիրը պետք է դառնա եռակողմ համաձայագրի առարկա՝ ուսանողի, ԳՊՀ- ի և ընդունող բուհի միջև:

#### **4.8. Ամփոփիչ ատեստավորում և աստիճանաշնորհում**

- 1) Կրեդիտների կուտակման գործառնության կիրարկման դեպքում շրջանավարտների աստիճանաշնորհումը կատարվում է ամփոփիչ ատեստավորման արդյունքում:
- 2) Ամփոփիչ ատեստավորման ընթացքում ստուգվում են ուսանողի ակադեմիական տվյալների՝ կուտակած կրեդիտների քանակի և բովանդակության, հանրագումարային

ՄՈԳ-ի, ինչպես նաև ավարտական ատեստավորման համապատասխանությունը մասնագիտության ավարտական պահանջներին:

## **5. Կրեդիտային համակարգի ինստիտուտները**

### **5.1. Ուսումնական խորհրդատուների ինստիտուտը**

- 1) Կրեդիտների կուտակման գործառույթի կիրարկման դեպքում ուսանողների անհատական ուսումնական ծրագրերը կազմելիս և ուսման ընթացքում նրանց աջակցելու նպատակով դեկանատները, ակադեմիական քաղաքականության վարչության մեթոդական աջակցությամբ, կազմակերպում են ուսումնական խորհրդատուների ծառայություն, որում ընդգրկվում են մասնագիտության կամ մասնագիտությունների խմբի ուսումնական ծրագրերին քաջատեղյակ մասնագետները:
- 2) Յուրաքանչյուր մասնագիտության կամ մասնագիտությունների խմբի խորհրդատուների թիվը սահմանում է ԳՊՀ ռեկտորը՝ ելնելով դրանցում ընդգրկված ուսանողների թվից և ռեսուրսային հնարավորություններից:
- 3) Ուսումնական խորհրդատուն իրականացնում է խորհրդատվական ծառայություններ մեկ կամ մի քանի հարակից մասնագիտությունների շրջանակներում և հսկում է իրեն կցված ուսանողների ուսման ընթացքը՝ առաջինից մինչև ավարտական կուրս:
- 4) Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, առավել արդյունավետ և նախընտրելի անհատական ուսումնական ծրագրեր կազմելու նպատակով նրանց համար կիսամյակի ընթացքում պարբերաբար իրականացնում է խմբային և անհատական խորհրդատվություններ, աջակցում անհատական ծրագրերում փոփոխություններ կատարելու և այլ հարցերում:

### **5.2. Ակադեմիական քաղաքականության վարչությունը**

Ակադեմիական քաղաքականության վարչության հիմնական գործառույթներն են.

- 1) կազմել և հրապարակել (տպագիր և/կամ էլեկտրոնային տարբերակով) բուհի դասընթացների տեղեկագիրքը յուրաքանչյուր ուս.տարվա համար,
- 2) կազմել և հրապարակել (տպագիր և/կամ էլեկտրոնային տարբերակով) տեղեկագրքում բերված դասընթացների և դրանց քննությունների կայացման ժամանակացույցերը յուրաքանչյուր կիսամյակի համար,
- 3) ապահովել դասընթացներին ուսանողների գրանցման և ընդգրկման գործընթացը (այդ թվում՝ ինտերնետով),
- 4) ապահովել դասընթացների և դրանց առանձին բաղադրամասերի ուսումնական հոսքերի ձևավորումը և պարապմունքների անցկացումը,
- 5) գրանցել և հսկել ուսանողների դասահաճախումները,



- 6) հաշվարկել և վերահսկել ուսանողների ակադեմիական առաջադիմության ցուցանիշները (ՄՈԳ և կուտակած կրեդիտների քանակ), պատրաստել և պարբերաբար թարմացնել ուսանողների ակադեմիական տեղեկագրերը,
- 7) համապատասխան ուսումնական ստորաբաժանումներին (ֆակուլտետներին) տրամադրել տեղեկատվություն ուսանողների առաջադիմության և դասահաճախումների վերաբերյալ,
- 8) ուսումնական ստորաբաժանումների հետ համատեղ իրականացնել ավարտական պահանջների կատարման աուդիտ,
- 9) ապահովել համալսարանի կայքի շահագործումը, անհրաժեշտ ուսումնական (դասընթացների և քննությունների ժամանակացույցեր) և մեթոդական (դասընթացների տեղեկագիրք) տեղեկատվության տեղադրումը և դրանց պարբերաբար թարմացումը,
- 10) իրականացնել օժանդակ և հարակից այլ գործառնություններ:

### **5.3. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները**

- 1) Ուսանողը պարտավոր է՝
  - ա) ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման կարգին և ուսումնառության իր անհատական ծրագիրը կազմելիս խստորեն հետևել դրա պահանջներին,
  - բ) կատարել ուսումնական դասընթացների և քննությունների սահմանված պահանջները,
  - գ) կանոնավոր հաճախել ուսումնառության իր անհատական ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին:
- 2) Ուսանողը կրում է անձնական պատասխանատվություն ուսումնառության իր անհատական ծրագրի և պարապմունքների դասացուցակի ճշգրտության և ամբողջականության ապահովման, դրանց ստուգման և ցանկացած սխալի կամ բացթողման անհապաղ ուղղման համար:
- 3) Ուսանողն իրավունք ունի՝
  - ա) ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար բուհի կողմից առաջադրվող պարտադիր և ոչ պարտադիր դասընթացները՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,
  - բ) միևնույն դասընթացի համար մեկից ավելի ուսումնական հոսքերի առկայության դեպքում կատարել ընտրություն՝ ելնելով դասախոսի և (կամ) դասընթացի կայացման ժամանակացույցի նախապատվությունից,
  - գ) բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից, յուրացնելու ցանկացած այլ դասընթաց, որը դասավանդվում է ԳՊՀ-ում կամ այլ բուհում՝ այդ բուհի կանոններով սահմանված կարգով,

- դ) միջբուհական փոխանակման և (կամ) ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի ժամանակահատված (կիսամյակ, ուստարի) ուսումնառել այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),
- ե) փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ կառավարության սահմանած կարգի,
- զ) ցանկացած կրթական աստիճանում ընդհատել կամ շարունակել ուսումնառությունը ԳՊՀ-ում,
- է) հիմնավորված կերպով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ կազմված ուսումնառության լրիվ կամ որևէ ժամանակահատվածի համար:

**6. Բուհի տարեկան ուսումնական բեռնվածքի հաշվարկը**

- 1) Ուսումնական ծրագրում և դասընթացների տեղեկագրքում դասընթացին հատկացված կրեդիտների (որոնք բնութագրում են դասընթացի լրիվ աշխատատարությունը) հետ մեկտեղ նշվում է նաև շաբաթական լսարանային ժամաքանակն՝ ըստ պարապմունքի ձևերի (դասախոսություններ, գործնական, սեմինար, լաբորատոր պարապմունքներ և այլն):
- 2) Ուսանողների անհատական ուսումնական ծրագրերի վերլուծության և առանձին դասընթացներին ուսանողների գրանցման տարիների ընթացքում ԳՊՀ-ում կուտակված վիճակագրական տվյալների հիման վրա դեկանատները կազմում և միևչև ընթացիկ տարվա հունիսի 1-ը ակադեմիական քաղաքականության վարչություն են ներկայացնում հաջորդ ուստարվա ուսումնական բեռնվածությունը և կազմում դասընթացների ու քննությունների ժամանակացույցերն՝ ըստ կիսամյակների:

**7. Ուսանողների ուսումնառության արդյունքների գնահատումը կրեդիտային համակարգում**

- 1) Կոնկրետ առարկայի գծով ուսանողի ամփոփ գնահատականը ձևավորվում է կիսամյակի ընթացքում հետևյալ գործոնների և դրանց կշիռների հիման վրա՝ հաճախումներ, երկու միջանկյալ և մեկ ամփոփիչ քննություններ/կամ ստուգարքներ/, անհատական աշխատանքներ, սեմինար, գործնական և լաբորատոր աշխատանքներին ակտիվություն: Ի տարբերություն մյուս գործոնների, հաճախումները գնահատվում են ակադեմիական քաղաքականության վարչության կողմից անցկացվող բացակայությունների ստուգման և դասախոսի կողմից մատչանում անցկացված բացակայությունների համադրման միջոցով: Գործոնները գնահատվում են 100 բալային համակարգով:

2) Կիսամյակը բաղկացած է 20 շաբաթից, որից 16 շաբաթը հատկացվում է ուսումնական պարապմունքներին, իսկ վերջին 4 շաբաթերը նախատեսված են գիտելիքների ամփոփիչ ստուգման և վերջնական գնահատականի ձևավորման համար: Յուրաքանչյուր կիսամյակի 6-րդ ու 7-րդ, ինչպես նաև 12-րդ և 13-րդ շաբաթների ընթացքում /երկու միջանկյալ քննաշրջաններ/ ուսումնական պարապմունքներին զուգահեռ տեղի է ունենում գիտելիքների ստուգում: Կիսամյակի վերջում, նախքան ամփոփիչ քննության կամ ստուգարքի անցկացումը, կատարվում է ուսանողի անհատական աշխատանքի և գործնական, սեմինար ու լաբորատոր աշխատանքներին մասնակցության ակտիվության գնահատում: Ըստ վեց գործոնների ձևավորված գնահատականների և գործոններին համապատասխան կշիռների հաշվարկվում է ուսանողի վերջնական գնահատականը: Պրակտիկայի գնահատումը կատարվում է նույն սկզբունքով՝ պրակտիկայի ավարտից հետո, չորս գործոնների հիման վրա:

### 3) Հաճախումներ

ա) Հաճախումները գնահատականի ձևավորման կարևորագույն գործոններից են: Գնահատման տեսանկյունից չեն առանձնացվում հարգելի և ոչ հարգելի բացակայությունները (դրանք առանձնացվում են կարգապահական տեսանկյունից):

բ) Յուրաքանչյուր քննությունից /միջանկյալ՝ 1,2 և ամփոփիչ/ կամ ստուգարքից առաջ, դեկանատի կողմից, քննական ձևաթերթում, մատյանների տվյալների և ուսումնական բաժնի համապատասխան ցուցակների հիման վրա, կատարվում է ուսանողի բացակայության ընդհանուր ժամաքանակի գրանցում կիսամյակի համապատասխան փուլի քննաշրջանի սկզբի դրությամբ: Միջանկյալ քննաշրջանների բացակայությունները հաշվառվում են հաջորդ փուլերի ընթացքում:

### 4) Քննություններ և ստուգարքներ

ա) Գիտելիքների ստուգումները կատարվում են քննությունների և ստուգարքների միջոցով՝ ըստ սահմանված ժամանակացույցի, կիսամյակի ընթացքում երեք անգամ (երկու միջանկյալ և մեկ ամփոփիչ):

բ) Քննությունները և ստուգարքները կարող են անցկացվել գրավոր կամ բանավոր՝ համաձայն առարկայի առանձնահատկության՝ ելնելով ուսումնական պլանից:

գ) Քննությունները և ստուգարքներն անցկացվում են կիսամյակի փուլերի քննաշրջաններում՝ 6-րդ ու 7-րդ, ինչպես նաև 12-րդ և 13-րդ շաբաթների ընթացքում /երկու միջանկյալ քննաշրջաններ/, և կիսամյակի վերջին մեկ շաբաթը հատկացվում է ստուգարքների հանձնմանը, իսկ 3 շաբաթը՝ ամփոփիչ

քննաշրջանի կազմակերպմանը՝ դեկանատի կողմից կազմված ժամանակացույցով:

դ) Նույն ուսանողը միջանկյալ քննությունը կամ ստուգարքը չի կարող վերահանձնել երկրորդ անգամ:

ե) Քննության կամ ստուգարքի արդյունքները գրանցվում են քննական ձևաթերթում՝ հերթական փուլի բացակայությունների հետ միասին:

զ) Ամփոփիչ քննությունների և ստուգարքների ժամանակ դասախոսը ստուգում է ամբողջ կիսամյակի նյութի իմացությունը:

է) Ամփոփիչ քննությանը կամ ստուգարքին ուսանողի մասնակցությունը պարտադիր է՝ անկախ մինչ այդ նրա հավաքած միավորների քանակից:

**Օրինակ 1.** Եթե ուսանողը 10 միավոր հավաքել է հաճախումներից, 10 միավոր՝ անհատական աշխատանքից, 10 միավոր՝ ակտիվությունից և 20 միավոր՝ միջանկյալ քննություններից, ապա մինչև ամփոփիչ քննությունը նրա հավաքած ընդհանուր միավորները կազմում են 50: Սակայն նա պարտավոր է մասնակցել ամփոփիչ քննությանը: Եվ եթե ամփոփիչ քննության ժամանակ նա հավաքում է 10- ից քիչ միավոր, ապա չի ստանում համապատասխան կրեդիտը և անցնում է լուծարային շրջան: Եթե լուծարքի ժամանակ նա հավաքում է 10 միավոր, ապա նրա ընդհանուր միավորների գումարը դառնում է 60 և նա ստանում է համապատասխան կրեդիտը և C+ նշանը:

**Օրինակ 2.** Եթե ուսանողը 6 միավոր հավաքել է հաճախումներից, 8 միավոր՝ անհատական աշխատանքից, 5 միավոր՝ ակտիվությունից և 8 միավոր՝ միջանկյալ քննություններից, ապա մինչև ամփոփիչ քննությունը նրա հավաքած ընդհանուր միավորները կազմում են 27: Այս դեպքում ամփոփիչ քննության ընթացքում 13- ից քիչ միավոր հավաքելու դեպքում ուսանողը անցնում է լուծարային շրջան: 13- ից ավել հավաքելու դեպքում ուսանողը ստանում է համապատասխան կրեդիտը:

### **5) Ակտիվությունը սեմինար, գործնական և լաբորատոր աշխատանքների ժամանակ**

ա) Ակտիվությունը գնահատվում է դասախոսի կողմից կիսամյակի վերջում /մեկ անգամ/՝ համաձայն կիսամյակի ընթացքում վարվող սեմինար, գործնական և լաբորատոր պարապմունքների մատյանների գրանցումների:

բ) Արդյունքները հատուկ ձևաթերթի վրա արձանագրվում են ամբիոնում կիսամյակի վերջում՝ վերջնական ստուգումից անմիջապես առաջ, և դեկանատի կողմից դրանք փոխանցվում են վերջնական ձևաթերթ:

### **6) Անհատական աշխատանք**

ա) Գիտելիքների գնահատման կրեդիտային համակարգը հաշվառում և արժևորում է ուսանողի անհատական աշխատանքը (առաջադրանքը), որը էական գործոն է հանդիսանում որոշակի մոդուլի վերաբերյալ վերջնական գնահատականը ձևավորելիս:

բ) Անհատական աշխատանքի թեմատիկան, տրման ձևը և հաճախականությունը հաստատվում են ամբիոնի կողմից:

գ) Դասախոսը անհատական աշխատանքի վերաբերյալ գնահատականներն արձանագրում է հատուկ ձևաթերթում, կիսամյակի վերջում՝ վերջնական ստուգումից անմիջապես առաջ, որից և դեկանատում դրանք փոխանցվում են վերջնական ձևաթերթի մեջ:

դ) Անհատական աշխատանքը կատարվում է գրավոր, անհատական ժամանակացույցի ռեժիմով, երբ ուսանողը, խմբային ընթացիկ աշխատանքներից բացի, կատարում է լրացուցիչ առաջադրանք՝ անհատապես աշխատելով ամբիոնի կողմից նշանակված դեկավարի հետ:

ե) Անհատական աշխատանքի ձևերն են՝ ռեֆերատները, կուրսային աշխատանքները, թեմատիկ զեկույցները, կուրսային նախագծերը /տես «ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» ՀՀ կառավարության թիվ 2307 որոշման 2-րդ կետը/:

զ) Անհատական աշխատանքի արդյունքները խստագույնս ենթարկվում են հաշվառման, փաստաթղթավորման, ամփոփվում և արձանագրվում են ամբիոններում՝ հատուկ ձևաթերթում:

է) Ուսանողի անհատական աշխատանքի վերաբերյալ արդյունքները պահպանվում են ամբիոնում՝ առնվազն վեց ամիս ժամկետով:

ը) Անհատական աշխատանքի ընթացքը վերահսկվում է ամբիոնի կողմից՝ նախօրոք կազմված առաջադրանքների ժամանակացույցով:

## **7) Լուծարք**

ա) Լուծարքը կազմակերպվում է վեց գործոնների փաստացի արդյունքներով, և դեկանատում հաշվարկվում է վերջնական ամփոփիչ գնահատականը, որը նշվում է ձևաթերթում:

բ) Լուծարք կազմակերպվում է ամփոփիչ քննության կամ ստուգարքի համար:

գ) Լուծարք է կազմակերպվում, երբ վերջնական հաշվարկային գնահատականը հավասար է «D»-ի քննության պարագայում /կամ «U»-ի ստուգարքի պարագայում/ և գումարային ամփոփիչ գնահատականի արժեքը փոքր կամ հավասար է 39-ից:

դ) Ամփոփիչ ստուգումից հետո դեկանատը կազմում է լուծարքին թույլատրված ուսանողների ցուցակը՝ այն հասանելի դարձնելով ուսանողներին և ամբիոններին:

ե) Լուծարքին թույլատրված ուսանողը քննությունը կամ ստուգարքը կարող է հանձնել երկու անգամ՝ դեկանատի կողմից հաստատված գրաֆիկին համապատասխան:

**8) Առարկայի կրեդիտը չստանալու և համալսարանից հեռացվելու պայմանները**

Ուսանողը չի ստանում տվյալ առարկայի կրեդիտը, եթե՝

ա) որևէ առարկայից ստացել է «D» կամ «U» գնահատական, բազմագործոն գնահատականը մեծ կամ հավասար է 39-ի, թույլատրվել է ամփոփիչ քննության կամ ստուգարքի լուծարքին և լուծարքի արդյունքում գումարային ամփոփիչ գնահատականի արժեքը չի բարձրացել 39-ից:

բ) Կիսամյակի արդյունքներով ուսանողը համալսարանից հեռացվում է, եթե նա չի հավաքել 30 կրեդիտ, այսինքն մեկ և ավելի առարկայից կրեդիտ չի ստացել:

### 8. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Գնահատականը	Նշանակումը	Թվանշանը	Միավորը
Գերազանց	A +	4,0	95-100
	A	4,0	87-94
	A -	3,7	81-86
Լավ	B+	3,3	75-80
	B	3,0	67-74
	B-	2,7	61-66
Բավարար	C+	2,3	55-60
	C	2,0	46-54
	C-	1,7	40-45
Անբավարար	D	1,0	0
Չներկայացված / Կտրված	F	-	0
Ստուգված	S	-	≥40
Չստուգված	U	-	< 40

**9. Միավորների բաշխումն ըստ գործոնների**

ա/ Քննությանը ավարտվող մոդուլների համար

	<b>Գործոններ</b>	<b>Միավորներ</b>
1	Հաճախումներ	10
2	1-ին միջանկյալ քննություն	15
3	2-րդ միջանկյալ քննություն	15
4	Ակտիվություն գործնական պարապմունքներին	15
5	Անհատական աշխատանք	15
6	Վերջնական քննություն	30
	<b>Ընդամենը</b>	<b>100</b>

բ/ Ստուգաբլիթ ավարտվող մոդուլների համար

	<b>Գործոններ</b>	<b>Միավորներ</b>
1	Հաճախումներ	10
2	Անհատական աշխատանք	20
3	Ակտիվություն գործնական պարապմունքներին	30
4	Վերջնական ստուգում	40
	<b>Ընդամենը</b>	<b>100</b>



## 10. Ուսանողների գիտելիքների որակի ստուգման ձևերը

1) Ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքում օգտագործելով ակադեմիական կրեդիտների կուտակման համակարգը՝ կիրառվում են ուսանողների գիտելիքների որակի ստուգման հետևյալ տեսակներն ու ձևերը.

- ա) ընթացիկ ստուգում,
- բ) միջանկյալ ստուգում,
- գ) ինքնուրույն աշխատանքի ստուգում,
- դ) հանրագումարային ստուգում:

### 2) Ընթացիկ ստուգում

ա) Կանոնակարգի համաձայն՝ ընթացիկ ստուգման ձևեր կարող են հանդիսանալ հարցումները, կարճատև ելույթները գործնական և սեմինար պարապմունքների ժամանակ, լսարանային ստուգողական աշխատանքները, տեսուերը և այլն:

բ) Ընթացիկ ստուգման ժամանակ դասախոսը գնահատում է ուսանողի պատրաստվածությունը գործնական և սեմինար պարապմունքներին, գնահատում է նյութի յուրացման մակարդակը, լսարանային աշխատանքներին նրա մասնակցությունը և ի հայտ է բերում ուսանողների պատրաստվածության թերությունները՝ տվյալ դասընթացի մեթոդները կատարելագործելու, պարապմունքների ընթացքում ուսանողների աշխատանքը ակտիվացնելու և իր կողմից ուսանողին անհատական օգնություն ցուցաբերելու նպատակով:

գ) Ողջ ուսումնառության ընթացքում ուսանողների գիտելիքների ստուգման համար ընթացիկ ստուգումները իրականացվում են այն դասախոսների կողմից, որոնք անցկացնում են գործնական կամ սեմինար պարապմունքները:

դ) Անկախ ընթացիկ ստուգման տեսակից՝ դասախոսը պարտավոր է անցկացնել տվյալ խմբի բոլոր ուսանողների ընթացիկ ստուգում և գնահատում: Ընթացիկ ստուգումը կատարվում է «ԳՊՀ առկա ուսուցման համակարգում բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական աստիճաններում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների գնահատման կարգ»-ի և «ԳՊՀ հեռակա ուսուցման համակարգում բակալավրիատի կրթական աստիճաններում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների գնահատման կարգ»-ի համաձայն:

ե) Ընթացիկ ստուգման արդյունք են համարվում այն միավորներով արտահայտված գնահատականները, որոնք ուսանողը հավաքում է ընթացիկ ստուգման համար տրված բոլոր աշխատանքներից և հաշվարկված ընթացիկ ստուգման գնահատականի մեջ նրա համամասնությունից:

զ) Ընթացիկ ստուգման ձևերը որոշվում են դասախոսների կողմից՝ հաշվի առնելով տվյալ դասընթացից ուսումնական պլանով նախատեսված պարապմունքի ձևերը:

է) Եթե ուսումնական պլանի համաձայն որևէ դասընթացից գործնական կամ սեմինար պարապմունք նախատեսված չէ, ապա ընթացիկ ստուգումն անցկացվում է դասախոսի կողմից տվյալ դասընթացի առարկայական ծրագրով նախատեսված պարտադիր գրավոր աշխատանքների /ստուգողական աշխատանք, տեստեր և այլն/ միջոցով:

ը) Ընթացիկ ստուգման գնահատականը հաշվարկվում է վերը բերված աղյուսակում «Ակտիվություն գործնական պարապմունքներին» գործոնին հատկացված 15 /ստուգարքի դեպքում՝ 30/ միավորի շրջանակներում բոլոր տեսակի ընթացիկ ստուգումների արդյունքներից՝ համաձայն ստորև բերված բանաձևի և աղյուսակի: Ընթացիկ ստուգումների ձևերը պետք է ունենան իրենց տեսակարար կշիռը ընդհանուր գնահատականի մեջ, և այդ տեսակարար կշիռների գումարը պետք է հավասար լինի 1-ի:

N	Ընթացիկ ստուգման տեսակները/տարրերը	Ընթացիկ ստուգման գնահատականի մեջ դրանց տեսակարար կշիռը /Կ <sub>x</sub> /	Ուսանողի ստացած գնահատականը ընթացիկ ստուգման տվյալ տեսակից /Գ <sub>x</sub> /	Ընթացիկ ստուգման վերջնական գնահատականի մեջ դրանց միավորները /u.3*u.4/
1	2	3	4	5
1	Ստուգողական աշխատանք	0,4	8	3,2
2	Գործնական պարապմունք	0,4	7	2,8
3	Սեմինար պարապմունք			
4	Տեստ			
5	Հարցում	0,2	6	1,2
6	Այլ /նշել/			
<b>Ընդամենը</b> /Ընթացիկ ստուգման վերջնական գնահատական/				<b>7,2</b>

Այսպիսով,  $V_{\text{ընթ}} = K_x * G_x$ , որտեղ

$V_{\text{ընթ}}$ -ն ընթացիկ ստուգման վերջնական գնահատականն է,

$K_x$ -ն՝ ընթացիկ ստուգման տվյալ տեսակի տեսակարար կշիռը,

$G_x$ -ն՝ ընթացիկ ստուգման տվյալ տեսակի գնահատականը:

Ընթացիկ ստուգման օգտագործված ձևերի տեսակարար կշիռը հավասար է 1-ի /0,4+0,4+0,2/:

Ընթացիկ ստուգման վերջնական գնահատականը կարող է կլորացվել 0,5 միավորի շրջանակներում:

### **11. Ուսանողների գիտելիքների միջանկյալ ստուգում**

1) Միջանկյալ ստուգումն անցկացվում է կիսամյակի կամ մոդուլի ընթացքում ուսանողի առաջադիմությունը գնահատելու և ուսանողների գիտելիքների վերջնական գնահատման ժամանակ ավելի մեծ օբյեկտիվություն ապահովելու նպատակով:

2) Միջանկյալ ստուգումը արտահայտում է հաստատված ուսումնական պլանում առկա դասընթացի առարկայական ծրագրում ընդգրկված թեմաների որոշ մասի յուրացումը ուսանողի կողմից և ամփոփում է այդ հատվածի /թեմաների/ գնահատականները:

3) Միջանկյալ ստուգումն անցկացվում է ստուգողական աշխատանքի, համակարգչային տեստավորման կամ այլ եղանակներով:

4) Միջանկյալ ստուգման արդյունք է համարվում գնահատականը՝ վերը բերված աղյուսակում միջանկյալ քննությանը հատկացված 15 միավորի շրջանակներում, որը դասախոսի կողմից նշանակվում է ընդհանուր ստուգման տեղեկագրի համապատասխան բաժնում:

5) Միջանկյալ ստուգման եղանակը և գնահատման սկզբունքները պետք է նախապես սահմանված լինեն դասախոսի կողմից՝ հաշվի առնելով տվյալ դասընթացի առանձնահատկությունները: Դրանք պետք է նկարագրված լինեն տվյալ դասընթացի առարկայական ծրագրում և տեղեկացվեն ուսանողներին դասընթացի սկզբում:

### **12. Ուսանողների ինքնուրույն աշխատանքի ստուգում**

1) Ինքնուրույն աշխատանքի ձևեր են ռեՖերատը, գեկուցումը, էսսեն և այլն:

2) Ինքնուրույն աշխատանքի ստուգումը նպատակ ունի բացահայտել և գնահատել ուսանողների հետազոտական ունակություններն ու հմտությունները տվյալ դասընթացի շրջանակներում:

3) Ինքնուրույն աշխատանքի ստուգման արդյունք է համարվում գնահատականը՝ վերը բերված աղյուսակում անհատական աշխատանքին հատկացված 15 /ստուգարքի դեպքում՝ 20/ միավորի շրջանակներում, որը դասախոսի կողմից նշանակվում է ընդհանուր ստուգման տեղեկագրի համապատասխան բաժնում: Ինքնուրույն աշխատանքի գնահատման չափանիշներ են նյութի յուրացման մակարդակը, նյութը ներկայացնելու հմտությունը, հետազոտական ունակությունների դրսևորումը:

4) Ինքնուրույն աշխատանքի ստուգման եղանակները և առաջադրվող թեմաները դասախոսի ներկայացմամբ նախապես հաստատվում են համապատասխան ամբիոնում և ուսանողների կողմից ընտրվում են կիսամյակի սկզբում՝ առաջին ամսվա ընթացքում: Կիսամյակի առաջին ամսվա վերջում դասախոսը ամբիոն է ներկայացնում խմբի ուսանողների ցուցակը՝ յուրաքանչյուրի անվան դիմաց ինքնուրույն աշխատանքի եղանակի և թեմայի նշումով: Ուսանողը պարտավոր է իր կատարած ինքնուրույն աշխատանքը գրավոր եղանակով ստուգման ներկայացնել ամբիոն ոչ ուշ, քան կիսամյակի դասընթացների 13-րդ շաբաթվա վերջը: Դասախոսը ամբիոնի և դեկանատի գիտությամբ կարող է կազմել նշված ժամանակահատվածում ինքնուրույն աշխատանքների ընդունման և ստուգման անհատական ժամանակացույց՝ տվյալ խմբի ուսանողների համար:

5) Ինքնուրույն աշխատանքը նշված ժամանակահատվածում հարգելի պատճառով ամբիոն չներկայացրած ուսանողներին դեկանատը կարող է թույլ տալ աշխատանքը ներկայացնել 14-րդ շաբաթվա ընթացքում:

### **13. Ուսանողների գիտելիքների հանրագումարային ստուգում**

1) Հանրագումարային ստուգման ձևեր են համարվում քննությունները և հանրագումարային ստուգարքները /այն մոդուլներից, որոնցից քննություն չի անցկացվում/:

2) Հանրագումարային ստուգումը նպատակ ունի վեր հանել և գնահատել ուսանողների տեսական գիտելիքներն ու գործնական հմտությունները տվյալ դասընթացից:

3) Հանրագումարային ստուգման արդյունք է համարվում գնահատականը՝ վերը բերված աղյուսակում վերջնական քննությանը հատկացված 30 միավորի կամ վերջնական ստուգմանը հատկացված 30 միավորի շրջանակներում, որը դասախոսի կողմից նշանակվում է ընդհանուր ստուգման տեղեկագրի համապատասխան բաժնում:

4) Հանրագումարային ստուգումների ժամանակացույցը գնահատման սկզբունքների, ինչպես նաև անցկացման ժամկետների հետ միասին հաստատվում է ֆակուլտետի դեկանի կողմից և տեղեկացվում դասախոսներին ու ուսանողներին անցկացման ժամկետից ոչ ուշ, քան մեկ շաբաթ առաջ:

5) Տվյալ դասընթացից հանրագումարային ստուգմանը մասնակցելու և գնահատվելու իրավունք ունեն միայն այն ուսանողները, որոնց հաճախելիության տոկոսը բարձր է առարկայական ծրագրում նշված նվազագույն ցուցանիշից, ինչը 40%-ից ցածր չպետք է լինի:

6) Հաճախելիությունը գնահատվում է հետևյալ կերպ.

7) Հանրագումարային ստուգման գնահատման ժամանակ այդ գնահատման բաղադրիչ տարրերը պետք է ունենան իրենց տեսակարար կշիռները, որոնք պետք է նախապես սահմանված լինեն դասախոսի կողմից՝ հաշվի առնելով տվյալ դասընթացի առանձնահատկությունները: Դրանք պետք է նկարագրված լինեն տվյալ դասընթացի առարկայական ծրագրում և տեղեկացվեն ուսանողներին դասընթացի սկզբում:

8) Ուսանողի վերջնական գնահատականը հաշվարկվում է վերոհիշյալ բոլոր գործոններից վաստակած միավորների գումարումով: Ստացված գումարային միավորը ըստ գնահատման վերաբերյալ համակարգի՝ համապատասխանեցվում է տառային նշանակումներին: Ըստ այդմ՝ համապատասխան A, B, C, S գնահատականները դրվում են տեղեկագրի և ուսանողի ստուգման գրքույկի մեջ, իսկ D, F, U գնահատականները՝ միայն տեղեկագրի մեջ:

9) Այն ուսանողները, որոնք ստանում են «անբավարար», «չստուգված» կամ «չներկայացած» գնահատականներ, համարվում են ակադեմիական պարտք ունեցողներ:

10) ԳՊՀ-ում կրեդիտային համակարգի շրջանակում իրականացվող յուրաքանչյուր գործընթաց պետք է նպաստի ուսման որակի բարձրացմանը, համալսարանի առաքելության իրականացմանը: